

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ  
ԵՆԹԱՎԱՐՉԱՎԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ք. ԵՐԵՎԱՆ, Երկու հազար տասնվեց թվականի հունվարի տասնիննին  
19.01.2016թ.

«ՈՒՐԲԱՆ ԼՈՋԻՍՏԻՔ ՍԵՐՎԻՍԻՍ ՏԵՐՄԻՆԱԼ» փակ բաժնետիրական ընկերությունը (պետական գրանցման համար՝ 269.120.865648, պետական գրանցման ա/թ՝ 18.07.2015թ., պետական գրանցման վկայական՝ 03Ա1015648) /այսուհետ «Վարձակալ»/ մի կողմից, ի դեմս տնօրեն՝ *Հովհաննես Բարսեղյանի* (նույնականացման քարտ՝ 000488957, տրված՝ 20.12.2012թ., 011-ի կողմից, հաշվառված՝ 22, ք. Երևան, Գուսան Շերամի փող., 892., բն. 4 հասցեում), ով գործում է Վարձակալի կանոնադրության հիման վրա,

և

22 -ն ի դեմս 22 գյուղատնտեսության նախարարության „Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմ“, հիմնարկ /ՀՄ/ (պետական գրանցման համար՝ 278.180.04577, պետական գրանցման ա/թ՝ 04.02.2011թ., պետական գրանցման վկայական՝ 01Բ002822) /այսուհետ «Ենթավարձակալ»/ մյուս կողմից, ի դեմս աշխատակազմի ղեկավար *Հովհաննես Գևորգյանի*, ում անունից 13.01.2016թ. տրված թիվ 40697 լիազորագրի հիման վրա հանդես է գալիս 22 քաղ. *Լևոն Արայի Չարխիֆալակյանը* (անձնագիր՝ AK 0510194, տրված՝ 24.05.2010թ., 010-ի կողմից, հաշվառված ք. Երևան, Արուսյան 48-14)

/այսուհետ՝ առանձին «Կողմ», իսկ միասին՝ «Կողմեր»/

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Վարձակալը պարտավորվում է վճարի դիմաց Ենթավարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել վարձակալության իրավունքի հիման վրա իր տիրապետման և օգտագործման տակ գտնվող 22, ք. Երևան, Շենգավիթ համայնք, Արարատյան փողոց, N 62/23 հասցեի վարչական շենքից 2222.2 /երկու հազար երկու հարյուր քսաներկու ամբողջ երկու տասնորդական/ քմ մակերեսով տարածքից թիվ 21 տարածքը՝ 11,5 քմ մակերեսով /այսուհետ՝ Տարածք/: Տարածքի զմանշված հատակագիծը կցվում է սույն պայմանագրին և համարվում է պայմանագրի անբաժանելի մասը:

Տարածքի մակերեսը կազմում է 11,5 /տասնմեկ ամբողջ հինգ տասնորդական/ քմ:

Ք. Երևան, Շենգավիթ համայնք, Արարատյան փողոց, N 62/23 հասցեի Անշարժ գույքի ընդհանուր մակերեսը կազմում է 41710.6 /քառասունմեկ հազար յոթ հարյուր տասը և վեց/ քմ և արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողը՝ 6.9731 /վեց և ինը յոթ երեք մեկ/ հա մակերեսով:

1.2. Տարածքի նկատմամբ Վարձակալի վարձակալության իրավունքը հավաստվում է 09.09.2015թ. /երկու հազար տասնհինգ թվականի սեպտեմբերի իննիս/ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Ալդա Աբրահամյանի կողմից վավերացված /գրանցամատյանի համար՝ 3691/ «Անշարժ գույքի վարձակալության պայմանագրով» (այսուհետ՝ Հիմնական պայմանագիր) և ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 15.09.2015թ. տրված N 15092015-01-0128 իրավունքի պետական գրանցման վկայականով:

1.3. Ենթավարձակալության հանձնվող Տարածքը ծանրաբեռնված է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի գրավի իրավունքով՝ համաձայն ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 05.11.2015թ. /երկու հազար տասնհինգ թվականի նոյեմբերի հինգին/ տրված թիվ ՄՏ-05112015-01-0121 միասնական տեղեկանքի: Ենթավարձակալության հանձնվող Տարածքի (որպես գրավի առարկա) վրա բռնազանձում տարածելու և/կամ գրավի առարկայի ցանկացած եղանակով (ձևով) կամ հիմքով իրացնելու դեպքում սույն ենթավարձակալության պայմանագիրը դադարում է և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի առաջին իսկ պահանջի դեպքում Ենթավարձակալը պարտավորվում է 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում ազատել Տարածքը: Սույն կետով նախատեսված պայմանագրի դադարման պայմանը գերակայում է ենթավարձակալության պայմանագրի՝ այլ կետերում նշված պայմանագրի գործողության և դադարման պայմանների և ժամկետների նկատմամբ: Ենթավարձակալության պայմանագրի գործողության ժամկետի վերաբերյալ դրույթը ճանաչվում է դադարած, եթե ենթավարձակալված գույքը (գրավի առարկան) սույն կետի պայմանների համաձայն իրացվել է կամ նրա վրա տարածվել է բռնազանձում:

Վոդմերը հաստատում են, որ Տարածքը որպես գրավի առարկա իրացվելու կամ դրանց վրա բռնազանձում տարածելու դեպքում, ենթավարձակալված (գրավադրված) տարածքի համաձայնեցված անբաժանելի բարելավումները «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի կողմից հատուցման ենթակա չեն:

1.4 Համաձայն Հիմնական պայմանագրի 4.2 կետի՝ Վարձակալն իրավունք ունի Տարածքը հանձնել ենթավարձակալության առանց Վարձատուի գրավոր համաձայնության:

1.5 Սույնով Ենթավարձակալն ընդունում է, որ Վարձատուի կողմից պահեստային համալիրի գրավադրումների (սկզբնական և/կամ հաջորդական) համար Ենթավարձակալի նախնական կամ հետագա համաձայնությունը չի պահանջվելու և Ենթավարձակալը կրում է գրավի հնարավոր բռնազանձման գործընթացներով պայմանավորված ենթավարձակալված տարածքի վաղաժամկետ ազատման հետ կապված ռիսկերը:

1.6. Սույն պայմանագրի գործողության ընթացքում Տարածքի օգտագործման արդյունքում Ենթավարձակալի ստացած եկամուտները նրա սեփականությունն են:

1.7. Ենթավարձակալության հանձնված Տարածքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

1.8. Տարածքը ենթավարձակալության հանձնելը հիմք չէ դրա նկատմամբ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

1.8. Տարածքը ենթավարձակալության հանձնելը հիմք չէ դրա նկատմամբ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

## 2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

### 2.1. Վարձակալն իրավունք ունի՝

2.1.1. Ենթավարձակալից պահանջել Տարածքն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին և անշարժ գույքի նշանակությանը համապատասխան.

2.1.2. Ենթավարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մուծելու վարձավճարը.

2.1.3. պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե Եթևավարձակալը Տարածքից օգտվում է սույն պայմանագրի պայմաններին կամ նշանակությանն անհամապատասխան.

### 2.2. Վարձակալը պարտավոր է՝

2.2.1. Տարածքը Ենթավարձակալին հանձնել սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից ողջամիտ ժամկետում՝ հանձնման-ընդունման ակտով: Նշված ակտը ստորագրում են Կողմերի լիազոր ներկայացուցիչները և այն հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը.

2.2.2. իրեն հայտնի դատնալուն պես, Եթևավարձակալին անհապաղ գրավոր տեղեկացնել Տարածքն ազատելու անհրաժեշտության մասին՝ կապված գույքի հիմնական վերանորոգման կամ քաղաքաշինական նկատառումներով քանդելու վերաբերյալ սահմանված կարգով ընդունված որոշումների հետ.

2.2.3. Տարածքը Ենթավարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում.

2.2.4. Տարածքը Ենթավարձակալին հանձնել դրա բոլոր պատկանելիքներով և դրան վերաբերվող փաստաթղթերով.

### 2.3. Ենթավարձակալն իրավունք ունի՝

2.3.1. պահանջել Վարձակալից սույն պայմանագրի 2.2.1. կետում սահմանված կարգով իրեն տրամադրել Տարածքը.

2.3.2. Վարձակալից պահանջել իրեն տրամադրելու անշարժ գույքի պատկանելիքներն ու դրան վերաբերվող փաստաթղթերը.

2.3.3. Տարածքի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝

- Վարձակալից պահանջել անհատույց վերացնելու Տարածքի թերությունները կամ համաչափորեն իջեցնելու վարձավճարը կամ հատուցելու Տարածքի թերությունները վերացնելու համար իր կատարած ողջամիտ ծախսերը.

- Վարձակալի հետ նախապես համաձայնեցնելով՝ վարձավճարից պահել տվյալ թերությունները վերացնելու համար իր կատարած և Վարձակալի կողմից ընդունելի համարված ծախսերի գումարը.

- պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը.

2.3.4. պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում, Տարածքի վիճակը վատթարացել է.

#### 2.4. Ենթավարձակալը պարտավոր է՝

2.4.1. Տարածքն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան.

2.4.2. ժամանակին մուծել Տարածքն օգտագործելու համար սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված վճարը.

2.4.3. Տարածքը պահպանել պատշաճ վիճակում, իր հաշվին կատարել դրա ընթացիկ վերանորոգումը և կրել Տարածքը պահպանելու համար անհրաժեշտ ծախսերը.

2.4.4. ապահովել անշարժ գույքի ճարտարագիտական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը.

2.4.5. առանց Վարձակալի գրավոր համաձայնության Տարածքում չկատարել վերանախագծումներ և վերասարքավորումներ:

Վարձակալի կողմից Ենթավարձակալի կատարած անշարժ գույքի նախնական տեսքը խեղաթյուրող ինքնակամ վերակառուցումներ, պատերի, միջնապատերի կամ ծածկերի ամբողջականության խախտում, ցանցերի վերափոխում կամ անցկացում հայտնաբերելու դեպքում, դրանք պետք է վերացվեն, իսկ Անշարժ գույքը պետք է իր նախկին տեսքին բերվի Ենթավարձակալի հաշվին՝ Վարձակալի կողմից միակողմանիորեն նախանշված ողջամիտ ժամկետում.

2.4.6. Վարձակալին անմիջապես տեղեկացնել ամեն մի վնասվածքի, ինչպես նաև վթարի կամ այլ իրադարձության մասին, որը վնաս է հասցրել (կամ սպառնում է հասցնել) Տարածքին, և ժամանակին ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները վտանգի, ինչպես նաև Տարածքի հետագա քանդման կամ վնասման կանխարգելման ուղղությամբ.

2.4.7. ժամանակին վճարել կոմունալ ծառայությունների համար սահմանված վճարները՝ Վարձակալի կողմից ներկայացրած հաշիվներին համապատասխան.

2.4.8. ապահովել Վարձակալի և Վարձատուի ներկայացուցիչների անարգել մուտքը դեպի Տարածքի՝ դրա գնման և ստուգման համար.

2.4.9. ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, Վարձակալին գրավոր տեղեկացնել Տարածքի սպասվելիք ազատման մասին՝ կապված ինչպես պայմանագրի ժամկետն ավարտելու, այնպես էլ դրա վաղաժամկետ դադարման հետ.

2.4.10. Տարածքն ազատելու ժամանակ այն վերադարձնել հանձնման-ընդունման ակով՝ պայմանագրի դադարման պահից եռօրյա ժամկետում, այն վիճակով, ինչպես հանձնվել է՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը.

2.4.11. սահմանված ժամկետում կատարել Վարձակալի կարգադրությունները՝ ուղղված Ենթավարձակալի գործունեության ընթացքում առաջացած այնպիսի իրավիճակների վերացմանը, որոնք վտանգ են սպառնում անշարժ գույքին, վարձակալված տարածքի բնապահպանական և սանիտարական վիճակին.

2.4.12. պահպանել Վարձատուի պահեստային տարածքում Վարձատուի կողմից սահմանված մուտքի ելքի, ներքին անվտանգության ռեժիմները՝ պատասխանատու

լինելով իր հաճախորդների, կապալառուների կողմից դրանց չպահպանման անբարենպաստ հետևանքների համար:

### *3. Պայմանագրի գինը և վճարման կարգը*

3.1. Սույն պայմանագրով Տարածքի համար ամսեկան վարձավճարի չափը սահմանվում է 80.000 /ութուոն հազար/ ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ):

3.2. Ենթավարձակալը վճարումը կատարում է հաշիվը ներկայացնելու օրվանից 5 (հինգ) օրացույցային օրվա ընթացքում:

3.3. Հաշվարկների գծով Ենթավարձակալի պարտավորությունները համարվում են կատարված դրամական միջոցների՝ Վարձակալի բանկային հաշվին մուտքագրվելու պահից:

3.4. Ենթավարձակալը կոմունալ ծառայությունների համար վճարում է Վարձակալի ներկայացրած հաշվին համապատասխան՝ Վարձակալի հաշվեհամարին գումարը մուտքագրելու միջոցով, Վարձակալի կողմից հաշիվները ներկայացնելու պահից հինգօրյա ժամկետում:

### *4. Կողմերի պատասխանատվությունը*

4.1. Պայմանագրի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմը պարտավոր է փոխհատուցել մյուս Կողմին պատճառված վնասները:

4.2. Պայմանագրի 3.1 կետի պահանջը Ենթավարձակալի կողմից խախտելու դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար հաշվեգրվում է տույժ՝ ժամկետանց գումարի 0.5 /զրո ամբողջ հինգ տասնորդական/ տոկոսի չափով:

4.3. Պայմանագրի այլ պայմանները խախտելու դեպքում մեղավոր Կողմը վճարում է տուգանք՝ ամսական վարձավճարի գումարի 0.5 /զրո ամբողջ հինգ տասնորդական/ տոկոսի չափով:

4.4. Տուգանքի /տույժ կամ տուժանք/ վճարումը Կողմերին չի ազատում պայմանագրով նրանց վրա դրված պարտականությունները կատարելուց:

4.5. Եթե Ենթավարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Տարածքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձակալն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարը լիովին չի մարում Վարձակալին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:

4.6. Վարձակալը պատասխանատվություն չի կրում ենթավարձակալության հանձնված Տարածքի այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են եղել Ենթավարձակալին կամ պետք է Ենթավարձակալի կողմից հայտնաբերվելին Տարածքը զննելիս:

4.7. Եթե Կողմերից որևէ մեկի մեղքով տեղի է ունեցել վթար, որը հանգեցրել է Տարածքի վնասմանը, ապա մեղավոր Կողմը դրա հետևանքները վերացնում է իր հաշվին և փոխհատուցում է մյուս Կողմին պատճառված վնասը:

### *5. Պայմանագրի գործողության ժամկետը*

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում դրանից ծագող իրավունքների պետական գրանցման պահից և գործում է մինչև 15.01.2017թ.:

5.2. Այն դեպքում, երբ ժամկետի ավարտից հետո Ենթավարձակալը Վարձակալի առարկության բացակայությամբ շարունակում է օգտվել Տարածքից, պայմանագիրը յուրաքանչյուր անգամ համարվում է վերսկսված նույն պայմաններով և ժամկետով, բայց ոչ ավելի, քան մինչև սույն պայմանագրի 1.2. կետում նշված «Անշարժ գույքի վարձակալության պայմանագրով» սահմանված ժամկետի ավարտը:

#### **6. Պայմանագրի փոփոխումը, լուծումը, գործողության դադարումը**

6.1 Պայմանագրի գործողությունը դադարում է դրա ժամկետն ավարտվելուց հետո, ինչպես նաև Կողմերի համաձայնությամբ սահմանված ցանկացած այլ ժամկետում:

6.2. Սույն պայմանագրի 1.2. կետում նշված «Անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը» դադարելու հետ միասին դադարում է նաև սույն ենթավարձակալության պայմանագիրը:

6.3. Սույն պայմանագրի փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր, կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով և ենթակա են նոտարական վավերացման: Սույն պայմանագրի հավելվածները դրա անբաժանելի մասն են:

6.4 Վարձակալի պահանջով սույն պայմանագիրը կարող է դատական կարգով վաղաժամկետ լուծվել, եթե՝

6.4.1 գոյացել է պայմանագրով նախատեսված վարձավճարի երկու ամսից ավելի պարտք՝ անկախ դրա հետագա վճարումից: Պայմանագրի լուծումը Ենթավարձակալին չի ազատում մինչև Տարածքի փաստացի ազատման օրը հաշվարկված վարձավճարի և տույժի վճարման պարտականությունից:

6.4.2 Ենթավարձակալի կողմից երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ապահովվել Վարձակալի կամ նրա ներկայացուցիչների անխոչընդոտ մուտքն Տարածքը՝ այն գննելու և ստուգելու համար:

6.4.3 առանց Վարձակալի գրավոր համաձայնության, Տարածքն ինչպես ամբողջությամբ, այնպես էլ մաս-մաս տրվել է նոր ենթավարձակալության կամ հանձնվել է այլ նպատակով օգտագործման, կամ ենթավարձակալության իրավունքը դրվել է գրավ կամ ներդրվել է այլ իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում:

6.4.4. Ենթավարձակալը դիտավորյալ կամ անզուգուրեն վատթարեցրել է անշարժ գույքի կամ դրա ինժինեռատեխնիկական սարքավորումների վիճակը:

6.5. Ենթավարձակալի պահանջով սույն պայմանագիրը կարող է դատական կարգով վաղաժամկետ լուծվել, եթե՝

6.5.1. Վարձակալը Ենթավարձակալի օգտագործմանը չի տրամադրել Տարածքը կամ խոչընդոտներ է ստեղծել Տարածքը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար:

6.5.2. Ենթավարձակալին հանձնված Տարածքն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին Վարձակալը չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել Ենթավարձակալին և վերջինս դրանք չպետք է հայտնաբերեր պայմանագիրը կնքելիս, Տարածքը զննելիս:

6.5.3. Հանգամանքների բերումով, որոնց համար Ենթավարձակալը պատասխանատու չէ, Տարածքը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

### 7. Ենթավարձակալված Տարածքի բարելավումները

7.1. Տարածքի Ենթավարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:

7.2. Ենթավարձակալի կողմից առանց Վարձակալի համաձայնության կատարված Տարածքից անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում:

7.3. Եթե Ենթավարձակալը իր միջոցների հաշվին, Վարձակալի համաձայնությամբ կատարել է Տարածքից անբաժանելի բարելավումներ՝ առանց դրան վնաս պատճառելու, ապա սույն պայմանագիրը դադարելուց հետո Ենթավարձակալն իրավունքն ունի այդ բարելավումների հարկային հաշվառմամբ չամորտիզացված արժեքի չափով Վարձակալից ստանալ հատուցում:

### 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնար են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### 9. Վեճերի լուծման կարգը

9.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումն իրականացվում է դատական կարգով:

### 10. Այլ պայմաններ

10.1. Կողմերի վավերապայմանների փոփոխման դեպքում նրանք պարտավոր են եռօրյա ժամկետում մինչև գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին:

Այն դեպքում, երբ կողմը չի պահպանում տեղեկացման համար սույն կետով սահմանված կարգը, ապա մյուս կողմը պատասխանատվություն չի կրում արդյունքում ծագած վնասների համար:

10.2. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 4/չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որոնցից մեկը պահվում է նոտարական գրասենյակում մեկ օրինակը հանձնվում է ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանմանը, իսկ մյուս օրինակները տրվում են Կողմերին:

**11. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**Վարձակալ**

**Ենթավարձակալ**

«ՈՒՐՐԱՆ ԼՈՁԻՍՏԻԲ ՍԵՐՎԻՍԻՍ ՏԵՐՄԻՆԱԼ» ՓԲԸ ՀՀ -ն ի դեմս ՀՀ

գյուղատնտեսության նախարարության

„ Մենդամթերքի անվտանգության

պետական ծառայության աշխատակազմ „ հիմնարկ /ՀՄ/

իրավաբանական հասցե՝	իրավաբանական հասցե՝
ք. Երևան, Արարատյան 62/23	ք.Երևան, Կոմիտասի 49/2
ՀՎՀՀ՝ 02263311	ՀՎՀՀ՝ 00454227
«ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ	Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 11500-648601986	Հ/Հ 900011404119

Տնօրեն՝ Զ. Բարսեղյան

Լիազորված անձ՝ Լ. Չարխիֆալայան

  
/ստորագրություն/  


  
/ստորագրություն/  
Լ. Չարխիֆալայան

Երկու հազար տասնվեց թվականի հունվարի տասնինին սույն պայմանագիրը վավերացված է իմ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Ալդա Աբրահամյանիս կողմից:

Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը, գործունակությունը, իրավաբանական անձանց իրավունակությունը, նրանց ներկայացուցիչների լիազորությունները, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ Վարձակալի իրավունքները ստուգված են:

Քաղաքացիական օրենսգրքի 611-րդ հոդվածին համապատասխան, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կառավարությանն առկա են Անշարժ Գույքի Կադաստրի Պետական Կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

Գրանցված է սեղանամատյանում № 79





